


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու րիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշման տողը
20 սանդիւն



Ի Ր Ա Վ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրութիւր

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆՑՈՒԴՍՐԱՔ

Վերջին օրերու քաղաքական մեծագոյն դէպքերն են՝ Սպանիոյ պատանի թագաւորին գահակալութիւնը, Ֆրանսայի հանրապետութեան նախագահին ջարհին տուած այցելութիւնը և անգլո-պօթեր պատերազմին խաղաղութեան պայմանները ընդունուած ըլլալու վերջին կարեւոր լուրը։ Իսկ ասոնցմէ զատ կան երկրորդական կարեւորութիւն ունեցող ուրիշ կարգ մը դէպքեր։ Ինչպէս, Պարսից Շահին Եւրոպա ճամբորդութիւնը, Ալգաս Լորէնի բացառիկ իշխանութեան բարձումը Վիլհելմ կայսրէն և այլն։

Ալֆօնս Ժ. Ի Երդուսը

Սպանիոյ Ալֆօնս Ժ. Թագաւորին գահակալութիւնը թէեւ ընդհանուր քաղաքականութեան վրայ ունի նշանակելի ազդեցութիւն չունի, բայց իբրեւ հազուադէպ և հետաքրքրաշարժ անցք մը կարծէ քանի մը տող եւս նուիրել անոր։

Մատրիտի մէջ տեղի ունեցած հոյակապ հանդէսները և արտակարգ շքեղութիւնները չեն ներկայացնիր այնչափ յատկանշական պարագաներ որչափ ամբողջ պետութեան մը բաղդը վարելու կոչուող թագաւորին իր հպատակներու ներկայացուցիչներուն, խորհրդարանին առջև արտասանած քանի մը խօսքերը, այսինքն այն հանգիստաւոր Երդումը զոր հարկադրուած էր ընել, որովհետեւ Ալգը իրմէ կը պահանջէր խորհրդարանին նախագահին բերնովը, որ հանգիստաւորութեամբ մը թագաւորին մօտենալով սա բառերը արտասանեց։

Տէ՛ր Արքայ, խորհրդարանը, Ձեր Օգոստոսի մօր կողմէ հրաւիրուած է ընդունիլ Ձեր Վեհափառութեան այն երդումը զոր Սպանիական Սահմանադրութեան 48րդ յօդուածին համաձայն, եկած էք երդումը պահելու Սահմանադրութիւնը եւ Օրէնքները։

Խորհրդարանին նախագահը այս

խօսքը արտասանելով Աւետարան մը կը ներկայացնէր թագաւորին, իսկ քարտուղարները՝ երգման բանաձեւը պարունակող գիրք մը։ Ալֆօնս Ժ. Ի իր աջ ձեռքը Աւետարանին վրայ դնելով արտասանեց հետեւեալ երգումը։

Կերպնում Աստուծոյ անունով Աւետարանին վրայ, պահել պահպանել Սահմանադրութիւնն եւ Օրէնքները։ Եթէ այսպէս ընեմ, Աստուած վարձատրոյս ըլլայ ինձ, եւ եթէ այսպէս չընեմ, թող հաշիւ պահանջէ ինձմէ։

Թագաւորը իր այս երգումով ինքզինք կը դնէ օրէնքին, կամ աւելի ճիշդը իր հպատակներուն հաւաքական տրամադրութեան տակ, որովհետեւ ժողովուրդին ընտրած երեսփոխաններն են որ օրէնքը կը սահմանեն, և հա այդ օրէնքը անխախտ պահելու համար է որ թագաւորը իր հանդիսաւոր երդումը ըրաւ։ ասով ինք օրէնքին ճշդիւ գործադրութեան հսկող պաշտօնեայի մը հանգամանքն կառնէ։ Ուստի տրամաբանական է ըսել թէ իսկապէս սահմանադրական երկրի մը իշխողը ժողովուրդն է, իսկ թագաւորը անոր պաշտօնեան։

Ահա թէ ինչու համար Սուլթան Համիտ Սահմանադրութիւն տալէ կը խորշի։

Պ. Լուպէի ձամբորդութեան առթիւ

Ֆրանսայի հանրապետութեան նախագահ Մ. Լուպէի Բեդրսպուրկ ճամբորդելը, ըստ ռուս մամուլի յայտարարութեան, քաղաքավարական պարզ այցելութիւն մը չէ։ պէտք է, կըսեն ռուս թերթերը, այդ կարեւոր գործողութիւն մը նկատել, որ ուլ աւելի պիտի ամրացնէ երկու պետութիւնները իրարեւ յիստորիկ զինակցական կապերը։

Բայց նկատի առնելով Չարի ու Մ. Լուպէի արտասանած բաժականութեան, հոն արտակարգ ոչ մէկ խօսք չենք տեսներ։ անոնք քաղաքավարական սովորական խօսքեր են, որոնք քանիցս տարբեր ձեւերու տակ արտասանուեցան ասկէ առաջ տեղի ունեցած այցելութեանց առթիւ ալ։

Լուպէանց առթիւ ալ հետեւեալ բարձր կը կարծենք թէ Մ. Լուպէի, արտաքին գործոց նախարար Մ. Տէլքասէի հետ, Բեդրսպուրկ Չարին տուած այցը քաղաքական նշանակելի բարդութիւններ կամ փոփոխութիւններ առաջ բերելու ընդմիջումներէ հետո՛ք է։ Եւ ինչ որ ցոյց կուտայ միայն սա է թէ Ֆրանսո-ռուս զինակցութիւնը միեւնոյն կապերուն վրայ հաստատ կը մնայ։ Աս ալ Ֆրանսացւոց համար մխիթարութիւն մը կը համարուի, մանաւանդ սա միջոցին, ուր կոմս Կոլուխովսքիի արտասանած վերջին ճառովը հասկեցուցաւ թէ Երեւակ Զինակցութեան վերանորոգումը ապահովուած է, որմէ Ֆրանսա դժգոհ մնալու պատճառներ ունի։

Ֆրանսացիք պահ մը կարծած էին թէ իրենց իտալիոյ հետ ունեցած մերձեցումը կարող պիտի ըլլայ իտալիան Երեւակէն բաժնելու։ Բայց այս յոյսը օգը ցոյց տուաւ Կոլուխովսքիի յիշեալ յայտարարութեամբ։ Թէեւ լաւատես և ստէպ երեւակալութեամբ զբաղող կարգ մը Գաղղիացիք այդ բացորոշ յայտարարութենէն յետոյ ալ Երեւակին վերանորոգումը անյուսալի ցոյց կուտային։ սակայն առջի օր իտալիոյ արտաքին գործոց նախարար Մ. Բալինէթի խորհրդարանին մէջ յստակ կերպով հաստատեց Երեւակին վերանորոգումը գրեթէ Կոլուխովսքիի արտասանած բառերով, և միայն սաչափ աւելցուց թէ Ֆրանսայի շահերուն հակառակող ոչ մէկ պայման և որոշում չկայ Երեւակի վերակազմութեան գոյութիւն տուող պայմաններուն մէջ։ Այս յայտնութիւնը բաւական է Ֆրանսայի խաղաղասէր դասակարգին մտքերը հանգարտեցնելու։ Իսկ Գերմանիոյ դէմ վրէժխնդրութեամբ վառ շղիկ դասակարգին բորբոքած ուղեղն ալ մի քիչ զովացաւ Վիլհելմ կայսեր այն բարեացակամ հրովարտակով, որով Ալգաս-Լորէնի վրայ իրեն գիլդատորական իրաւունք տուող օրէնքին հաստատուած ընկեր։

Հետեւաբար այսօր Երեւակին դէմ Երեւակ Զինակցութիւնը կայ ու կը պահէ իր կապերը, բայց

թշնամութիւն գրգռող առջի պատճառները իրենց զօրութիւնը կորսնցուցած են։ մանաւանդ թէ այդ երկու խումբերուն անդամները, զատ զատ, հակառակ խումբին վերաբերողներուն հետ այն տեսակ մասնաւոր կապերով կապուած են, որով իրենց միջեւ մօտուոր ընդհարումի մը հաւանականութիւն չը տեսնուիր առ այժմ, եթէ արտաքին և նոր պատճառներ չը գտնուին խանգարել իրաց ճորտի Արեւելքի մէջ Անգլիոյ ներկայ ընթացքը կոնայ քաղաքական ծանր և բարդ խնդիրներ մշտեղ հանել։ Այս մասին վերջին պահուս Բարիզէն ստացուած թղթակցութիւն մը՝ զոր տեղւոյ անձկութեան պատճառաւ մեր յաջորդ թիւին յետաձգեցինք, կը պարզէ պետական բարձր անձնաւորութեան մը տեսութիւնը։

ԳՈՒՐԴԵՐ

ՇՆՈՐՀԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Քաղաքիս Ս Սարգիս եկեղեցւոյ քահանայ Արժ. Տ. Սարգիս Հայրը շնորհաւորական նամակ մը ուղղած ըլլալով Ամեն. Էկզարքին 25ամեայ Յորեւելեանին առթիւ հետեւեալ պատասխանը ստացած է Նորին Ամենապատուութենէն։

Արժանապատիւ Քահանայ

Տ. Սարգիս Ղարկեան

Շնորհակալ եմ ձեր բարեմաղթութիւններէն եւ շնորհաւորութիւններէն զորս կը յայտնէք իմ էկզարքական Աթոռը բազմելու 25ամեայ Յորեւելեանիս առթիւ թէ՛ ձեր եւ թէ՛ Վառնայի ամբողջ Հայ ժողովուրդին կողմանէ։

Կը խնդրեմ որ մեր շնորհակալութիւնը եւ օրհնութիւնը հաղորդէք ձեր Պատուական հօտին։

Մնամ Յարգանք

Էկզարք Պաշկարաց
ԵՕՍԻՅ

Կ. Պօլիս, 10 Մայիս 1902

ԹԱՏՐՈՆԸ

ԵՒ

ՎԵՍԵԼԸ ԹԱԹԵՐԱԽՈՒՄԸ

Տեղական թերթի մը 418-414 թիւերուն մէջ «Վէսէլլո» Հայ դերասանական խմբին նկատմամբ «Հրանդ-Ժիրայ» ստորագրուած թատերական քըննդատակը ուշի ուշով կարգացի. եւ քառասուն երկար տարիներ թատերական արհեստին աշխատող ըլլալով, ստիպուեցայ պատասխանել այդ յոգուածի սխալ տրամադրութեանց եւ հեգնելի քննադատութեանց: Բայց յօդուածագրին պատասխանելէ առաջ նախ պարզեմ բուն թատերական արհեստին հիմնական կէտը: Ինչ է թատրոնը եւ թատերաբեմը, նաեւ հոն գործող դերակատարները: Թատրոնը հին դարերէ ի վեր կրթութեան վայր մը եւ թատերաբեմը բարոյականութեան մարզանաց տեղի մը ընդունուած է: Թատերաբեմին է որ մարդոց իմացականութիւնը կազմուած է, հոն Աստուածային էութեան գոյութիւնը կը հաստատուի, հաւատքը սրտին մէջ կարմատանայ, հոն կը տեսնուի բնական կալ կայսրը եւ անխառն դատաւորը, հոն են վանականը եւ շինականը, աղքատն ու հարուստը, վաւաչոր ու ժուժկալը, հերոսը եւ կեղծ յեղափոխանը, մատնիչը եւ հայրենասէրը, խաչագողը եւ ազգանուէրը, ազահը եւ կեղծաւորը, անսուտ կրօնաւորը եւ սեւ սիրտ քահանան, չարն ու բարին: Թատերաբեմին է կըսէ մեծանուն փիլիսոփայ Վօլթէր մարդկային գաղափարը վեհացնողը, հոն ուր կը սորվին մարդիկ կենաց փիլիսոփայութիւնը, ոչնչութիւնը ու մահը...:

Օր մը ողբերգակ հռչակաւոր Բասինի հարցուցին թէ ինչու իր գրած բանաստեղծական քերթուածները միշտ թատերական երկերու վերածած է. առ այս կը պատասխանէ Բասին թէ պարզ կարգալէ աւելի թատերաբեմը մարդու սրտին եւ խղճին կազմէ, հոն է մարդասպանին զղումը, սիրոյ զգոթեղ զոհը, արեւոյթեան հետեւանքը, լացը եւ ծծաղը, հոն է Աստուածային սէրը, հաւատքը եւ յոյսը, վերջապէս մարդկային բնութեան պատկերացեալ իրականութիւնը: Եւ այս իրականութիւնը պատկերացնողը դե-

րասանն է, ան է այդ բեմին յանկուցիչ զարդը, սրտի զգացման արտայայտողը, ուսուցիչը եւ քարոզիչը: Գերասանը իր ձեւերովը, դարձուածքով եւ ազդու առողջանութեամբ հանդիսատեսին հոգեւոյն կազմէ, նա հարկ եղած ատեն աչքերէն արցունք կը քաղէ, երբեմն ալ կը խնդացնէ: Իսկ ինչ է ատենը վարձքը կամ քաջալերութիւնը, կարծել զանոնք անպատիւ անձեր ու բամբասանաց եւ անսեղի քննադատութեանը ենթակայ: զանոնք քաջալերելու փոխարէն կ'ուհեգնութիւններով անգոսնել, այս է այդ վեհ տաճարին սպասարկութեան վարձքը:

Մեր Պ. յօդուածագիրը. ոչինչ գին մը վճարելով մեծամեծս կը պահանջէ, «Վէսէլլո»ն ամենակատարեալ դերասանական խումբ մը տեսնել կերեւակայէ. միթէ՞ մեր գերասանները Բարիզի կամ Իտալիոյ քոնսերվատորներէ ելած «աքթօրներ» կը կարծէ, եթէ ունենայինք «քոնսերվատոր» մը, այն ատեն շատ եւ շատ Սարա Պերնարներ, Բաթթիններ, Միլլէներ, Փօքլէներ եւ Ադամաններ կ'ունենայինք եւ մեր յօդուածագիրը այն ատեն կարելի է գոհ լինէր...:

Դառնանք ահոր գրած յօդուածին, նախ Պ. Հրանդ Ժիրայը կը սխալի սա կէտին մէջ թէ ազգային տեսակետով «Վէսէլլո» խումբը զէրօ է: Մարդ ամչնալու է այդ խումբն ընելու. ինչ, միթէ «Վէսէլլո» խումբը ազգային ներկայացումներ տուած չէ՞ եւ չուզէր տալ, ուր է Արշակը, Վահանը, Ասլան-Չարուհին, Վարդանը, Ուղարդը, եւն. եւ այլն. ասոնք միթէ «Վէսէլլո» խմբին կողմանէ չեն ներկայացուած, ինչպէս չը ծիծաղի մարդերը «Վէսէլլո» խմբին տուած ներկայացումները Պ. յօդուածագիրը խենչ, զէլզէլ խաղեր կ'անուանէ: Եւ ով ըսաւ թէ «Վէսէլլո»ն առանց դրամի ի փառս եւ ի պատիւ Պ. յօդուածագրին փառաւոր ներկայացումներ տայ եւ անօթի մնայ: Ինչու ասկէ վեց տարի առաջ, թատերական առաջին կարգի խումբ մը, որուն մէջ կը փայլէին Տիկին Սիրանոյշ, Տիկին Պայծառ, Պ. Ֆասուլեան, Պ. Դրեան, Պ. Հօլասեան եւ ուրիշներ, ինչու չը քաջալերեցիք, այդ խումբը ձեր ուղած խաղերը ներկայացուցին եւ վերջ ի վերջոյ ժողովրդային հանգանակու-

թեամբ Պօլիս վերագործան: Դուք կը փափաքի՞ք որ «Վէսէլլո»ն ալ այդ վիճակին մէջ տեսնէք: Կը յիշէ՞ք կարծեմ Պ. Հօլասեան դերասանը որ երբ հոգ Թիլիպէի մէջ Արշակ Բ-ի դժուարին դերը կը կատարէր չոր չոր կը ծափահարէր եւ կեցցէներով օղը կը թնկացնէր: Եւ այդ ինչու ալ ծափահարած դերասանիդ Թիլիպէի մէջ ձեր աչաց առջեւ ձուկ ծախեց իր օրապահիկը հայթայթելու համար: Պ. մեծախօս, պահանջկոտ յօդուածագիր, ինչու ներկայէս չօգնեցիք ազգային ներկայացում տուող այդ անօթի դերասանին, կը փափաքի՞ք որ «Վէսէլլո»ն ալ այդ վիճակին մէջ տեսնէ: Եթէ կովկասի ներկայացումները օրինակ կը ցուցնեն, շատ կը սխալիս, հոն կը գտնուին այնպիսի անձնաւորութիւններ որ թատեր յառաջանալուն ձեռնտու կըլլան եւ կ'ըրիկ գումարներ կը նուիրեն, իսկ ձեր նմանները ինչ կը վճարեն՝ ոչինչ զատ մեծ մեծ պահանջումներ, եւ եթէ դերասանէ մը կերպի իւրի վերաւորութիւն, անմիջապէս երկարօրէն քննադատականի դուռը զգուցի յօդուածներու եւ պոռնուքներու կը սկսիք, որոնք ամենեւին ազդեցութիւն մը չունին «Վէսէլլո»ին վրայ: «Վէսէլլո» խումբը ամէն դասակարգի թատերասիրաց ճաշակին համեմատ կուտայ ներկայացումներ, եւ այսպէս իր գոյութիւնը հաստատ հիման վրայ պիտի պահէ:

ՏԻԳՐԱՆ ԳԱԼԵՍԻԱՆ
(Մանգեալը յաջորդով)

ՇՈՒՄԼԱՅԻ ԱԶԳԱՅՆՈՅ

ՌՈՒՍՉՈՒԻՔ, 11 Մայիս

Իրաւունքի 35րդ թուով Շումլայի թաղականութեան պաշտօնագիրը ի միջի ալլոց կը յայտարարէ. «Մեծ յոյս ունինք թէ այս պարոնի գործառնութիւններու մօտէն տեղեակներն ալ պիտի փութան հաստատել եւ լուսաբանել այս ձրիա. կերթ Շումլայէն դուրս գործած նախճրներն եւ ալլոն»:

Մենք Նպատակ եւ ժամանակ չունինք երկար գոհլ եւ խօսիլ, բայց քանի՞ որ ազգային կրթա-

կան յարկի հետ կապ ունեցող եւ հրապարակ նետուած մի հարց է սոյն նկատողութիւններն ունինք:

Ա. Հայ Թիդ. Դաշնակցականներն ամեն ուրեք աւելի պիտի սիրուէին եւ յարգուէին եթէ գիտնային ընտրանք վերաբերվիլ իրենց անգամակցողների հանդէպ, որով տխուր անցեալ մը եւ գաղջ ներկայ մը ունեցողն դիւրութիւն չէր ունենար այդ ընկերութեան բարեմիտ անդամներու համակ. բանքը չարաչարս գործածել, որպէսն է ա. ժամ ի Շումլա Արտաշէս կարապետեան (կամ բնիկ Պարտիզակցի Պետրոս Ս. Պաճեան) եւ կամ ասոր նման ուրիշ յետնորդներ, որոց տխրագործութիւններն Ամիրկայէն Եւրոպա կարճագոյն գնն գրեթէ ամեն օր, Ուստի յորգելի ընկերներ՝ Պ. Դաշնակցականներ ուր ուրեք որ կայք ընտրանք վերաբերվիլ վարժուցիչք ձեր ընկերութեան անգամակցողներին հանդէպ...:

Բ. Արտաշէս կարապետեան երբ իր յայտնի խաչագողական «կարմիր խաչ» ընկերութեան տոմսակներն ծախելու եկած էր քաղաքս, անոր նախատանօք արգիլուելուն եւ թողնել փախչելուն գրեթէ աւանդաւոր եղաւ, թէեւ քանի մը փրանքներ մի քանի միամիտներէ չորթած էր. բայց այդ տխուր հիմարեմն անդին ալ չը գիտենք ինչ եղան այդ տոմսակներն, արդեօք այժմ իր գաշակցական ընկերներն չեն հարցնիր:

Գ. Արտաշէս կարապետեան անուն անձն 1892էն ի վեր ճանչցուած եւ նկատուած է իբր խա-Պ. եւ խառնակի մէկը. յիշեալի համակրող պարոններուն կը հրաւիրենք թերթեմ Դանուշ թերթի (*) 1892 տարուան թիւերն, ուր թագ-

(*) Այն ատեն տեղական թերթ մը չը գտնուելուն պատճառաւ Դանուշի մէջ հրատարակուած է:

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ (19)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԼՈՒՍԻԱ

- Այս անգամ շատ ուշացար, չէ՞, հարցուց ծերունին հայրական անկեղծ արտասանութեամբ մը:
- Ինչ ընեմ, ասանկ պատահեցաւ, պատասխանեց Վանական:
- Մանկամարդ աղջիկը լուռ էր: Միայն թէ իր սիրատարի աչքերը Վանականին վրայ յառած՝ մտիկ կընէր:
- Մէկը հասա՞ւ իր տեղը, յարեց ծերունին:
- Այո՛:
- Այդ աղէ՛կ: Բայց իմացա՞ր թէ Դիդրը սպաննուած է:
- Չէ՛... իրա՞ւ սպաննուած է:

- Ծաբաթ մը առաջ իր տունին մէջ սատկեցողներ են:
- Սպաննողը ձերբակալուած է:
- Ո՛ւ պիտի ձերբակալեն: Պատմութեան նախելով՝ Վարդապետի մը հագուստով է եղած:
- Ուրիշ ինչ լուր կայ:
- Ուրիշ լուր մը... ուրիշ լուր մը չկայ, միայն թէ Մէլիքին հետ բանտարկուած Տէր Օհան քահանան, որ անպարտ արձակուած էր, ինչպէս գիտես, նորէն ձերբակալուած է:
- Նորէն ձերբակալուած է...:
- Այո՛:
- Արդեօք, ինչ դարձած է գեղին մէջ:
- Չեմ գիտեր... բայց լսածիս նախելով, շատ իրարանցումներու մէջ կը գտնուի: Դեղին բոլոր աչքի դարնուած մարդիկ բանտը կը լեցուն իրարու ետեւէ... յայտնի բան է որ մասնող մը կայ:
- Ինչ որ է... ուրիշ:
- Ուրիշ՝ ողջութիւնդ:
- Դուք ինչպէ՞ս ես, Լուսիա, հարցուց Վանական՝ մանկամարդ աղջկան աչքերուն մէջ նայելով:

- Լուսիա գողգողաց: Լեզուն բռնուեցաւ... ու իրեն անանկ եկաւ որ կը խղճուէր: Բայց ճի՞շդ մը ըրաւ ու պատասխանեց.
- Ծնորհակալ եմ... լաւ եմ:
- Գիտե՞ս, անցն ալ անդամին խոտացար քովդ առնելու Մէլիքին աղջիկը, նկատել տուաւ Վանականը, այնպէս չէ՞:
- Զիչդ է, միմիջեց Լուսիա:
- Կուգե՞ս քովդ ունենալ:
- Ամենայն սիրով:
- Խիստ լաւ՝ վաղը գեղայիթի մը հետ հոս պիտի բերուի, կընդունի՞ս:
- Կընդունիմ ու պիտի սիրեմ զինքը:
- Ո՛հ, որչա՞փ բարի ես, Լուսիա:
- Պարտականութիւնս է...
- Կը մնայ ըսեմ թէ այս գիշերը պիտի մննիս:
- Այս գիշերը... բացառանքից ձեռունին, որ չկրցաւ համբերել:
- Այո՛, այս գիշերը... որովհետեւ գործս կարեւոր է:
- Չկրնար ըլլալ որ օր մը յետաձգես, ընդմիջեց Լուսիա:
- Չկրնար ըլլալ, որովհետեւ ստիպողական հարկի մը տակ կը գտնուիմ:

Լուսիա եւ ծերունին ալ չպնդեցին: Արդարեւ, ժամէ մը ետք Վանական մեկնեցաւ:

ԼԱՆԵՉԱՐ

Այն գիշերը, ուր սպաստանած էր Լաւիդը, Վանայ Թիմար կոչուած լոնադաշտերուն մէջ կը գտնուէր, Ա... գեղէն երեք ժամ հեռաւորութեամբ:

Այդ հայաբնակ ու հարիւր տունէ բաղկացած գիւղը Միացեալ Ընկերութեան վարժարան մը ունէր, եւ նորայէն եկեղեցի մը կը պահէր շատ պայծառ վիճակի մը մէջ: Վարժարանին ուսուցիչն էր տարիքն առած, բարի ու հայրենասէր ծերունի մը, որ հակառակ իր ալիւր հասակին՝ բաւական զարգացած էր:

Այդ ուսուցիչը—որուն պատուելի Մարտիկ անունը կուտային—ծանօթացած էր Վանականին հետ եւ անոր գաղափարակիցն եղած էր անկեղծ ու հաւատարիմ երգումով մը: Ուստի,

ւոր Ս. Խաւէզեան անուն իր մէկ հայրենակիցն աւելի յստակ և ման. իրամանօրէն պարզած է յիշեալի ոչ բարով վարքն, և այդ թռուկանէն մինչ այս օր արտասահմանի մէջ հրատարակուած բոլոր թերթերն ալ գրեթէ, պարբերաբար հրատարակած և զգուշացուցած են հասարակութեան յիշեալէն: Արդ, քիչ թէ շատ ուղղամիտ և պատուաւոր մարդ պարտաւոր է զգուշանալ և զգուշացնել իւրային. ներքին յիշեալէն. և չը թողալ որ Ազգային հաստատութեան մը սեւմէն ներս դէն ոտքը, եթէ իրաւամբ չենք ցոնկար տեսնել տխրող լեւոն Սարգիսեանի մը երկրորդ տիպն:

Օ՛ն Շումլացի ազգայիններ, վտարեցէք ձեռն զայն և իր ընկերներն:

ՇԱՀԱՊ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տփղիսի թերթերը կը գրեն թէ Աթէնքի մէջ սկսուած է Հայոց մատուռի մը շինութիւնը: Այդ առթիւ վեհ. Հայրապետը կոն. դակներ զրկած է Երուսա և այլուր ապրող ազգայնոց, որոնց հրաւէր կը կարգայ այդ ձեռնար. կրն նպաստելու:

— Պարսից Շահի Բազուն ան. ցած միջոցին, այդ քաղաքի Հայոց կողմէ պատգամաւորութիւն մը ներկայացած է Ն. Վեհափառութեան: Պատգամաւորութեան մէկ անդամը երկրորդափ Տ. Կ. Խուտիսեան ուղերձ մը կարդացած է, որով Բազուն Հայոց խորին շնորհակալութիւնը յայտնած է ոյն հովանաւորութեան համար որ վեհ. Շահի կառավարութիւնը կը շնորհէ իր Հայ հպատակներուն:

— Սամսոնի Գաւառ. Խառն ժողովը խնդրած է Պատրիարքա.

րանէ չպնդել Տ. Աշոտ եպիսկոպոսի՝ Սիսի կաթողիկոսական ընտրութեան իբր պատուիրակ Ատանա երթալուն վրայ. որովհետեւ Ն. Սրբազնութեան Սամսոնի մէջ անընդհատ ներկայութիւնն անհրաժեշտ է եկեղեցւոյ վերաշինութեան համար, որուն ձեռնարկուած է:

— Նպաստից Թանձնաժողովոյ վերակազմութեան համար քննարկի առաջարկուած են Ազգին մէջ անուն և դիրք ունեցող գերդաստաններու գործունեայ երիտասարդ անդամներ, որոնք կը սին պոլսահայ թերթերը. թէ հաշիւէ հասկնալով և թէ աշխատելու տրամադրութիւն ունենալով, պիտի կրնան վստահութիւն ներշնչել եւ արդիւնաւոր ընծայել իրենց պաշտօնը: Այսօր գումարուելիք խառն ժողովոյ մէջ Թանձնաժողովոյ անդամոց ընտրութիւնը պիտի կատարուի: Ինչպէս բառը ենք, այս մարմինը կոչուած է թէ կազմալուծեալ Միացեալ Ընկերութեան տեղը լեցնել և թէ որքանոցներու և արհեստանոցներու վերին հսկողութիւնը ու մատակարարութիւնը կատարել: հետեւաբար դիւրին է ըմբռնել իր պաշտօնին աւագ կարգաւորութիւնը մեր ապագայ սերունդին ճակատագրին նկատմամբ:

— Աղեքսանդրիոյ նորըտիր թաղ. Խորհրդոյ չհրաժարող երկու անդամներու բողոքը, քիչ դէմ Օրմանեանի կամայական հրահանգին, Քաղ. Ժողովը մասամբ արդար նկատելով որոշած է ընտրութեան վերաբերեալ թուղթերը Աղեքսանդրիոյ բերել տալ, և յետ ընտրութեան, եթէ ընտրութեան գործողութիւնները օրինաւոր զտնէ, չհրաժարող երկու անդամներու ընտրութիւնը հաստատել և հրաժարած հինգ անդամներու տեղ նորեր ընտրելու համար հրահանգ տալ: Մինչդեռ Օրմանեան

Եգիպտոսի առաջնորդէն ստացած մէկ հեռագրին վրայ, քեյֆի մալա, չեղեալ նկատած էր կատարուած ընտրութիւնը և սոժամ. թաղ. Խորհրդոյ մը կազմութեան հրահանգ տուած: Քաղ. Ժողովոյ այս վեղջին որոշումը Օրմանեանի երեսին լաւ ապտակ մըն է եթէ հասկնայ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Խորհրդէ Մայիս 8 թուով հետեւեալը կը գրեն Լեւոնի Հեռլիսի.

«Տաւրոս լեռներուն մէջ, Խորհրդէ 50 մղոն հեռի գէպի հարաւ կը գտնուի Զընթուշ, որ նկարագեղ քաղաք մըն է: Ժողովուրդին մեծ մասը Հայ է, բայց բաւական թուով թուրքն տանիքներ ալ կը բնակին քաղաքին մէջ: Գաւառին բնակիչներուն մեծ մասն աղքատ է, բայց որովհետեւ արհեստաւոր են, իրենց քուրդ գրացիներէն կը ճարեն իրենց ապրուստը: Անցեալ Շաբաթ իրիկուն, երկու Հրեաներու բնակած սենեակի մը մէջ լսւեցաւ մը շրջելով կրակ առաւ: Հրդեհը տարածուելով, շուկային մեծ մասը, իբր 200 խանութ, հրոյ ճարակ եղան: Ասիկա մեծ աղետմըն է այսպիսի հասարակութեան մը համար: Գաւառիս ցանքերը լաւ են եւ հետեւապէս ցորենն աժան է»:

* * Թուրքիոյ թղթատարական բաւերնորոգման յանձնաժողովը որոշած է հեռագրական վարձքը թեթեւցնել: ցարդ մէն մի բառի համար 40 փարա եւ հեռագիր գումար ալ 5 զրուշ կառնուէր: Նոր որոշման համաձայն 40 փարան 20ի իշած է եւ 5 զրուշն ալ բոլորովին շնչուած: Պոլսոյ եւ շրջակայի բնակիչներուն միջեւ փոխանակուած հեռագիրներէն 20 բառի համար 100 փարա, իսկ 20էն աւելի 10 բառի համար 50 փարա պիտի առնուի: Սահմանակից նահանգներուն միջեւ փոխանակուած հեռագիրներուն մէն մի բառին համար 20 փարա պիտի առնուի, պայմանաւ որ հեռագրի մը արժէքին նուազագոյն չափը զոնէ 7 1/2 զրուշ ըլլայ: Բայց սահմանակից չեղող նահանգներուն միջեւ փոխանակուած հեռագիրներուն իւրա-

քանչիւր բառին համար առաջուան պէս 40 փարա պիտի առնուի:

* * Իտալական թերթերը անցեալ օրեր հաղորդեցին թէ Կարիպալտի մահուան տարեգարծին առթիւ Իտալիոյ բոլոր քաղաքներէն բազմաթիւ ժողովուրդ կը պատրաստուի երթալ Գաբէրա կղզին, ուր կապէր անմահ հերոսը իր վերջին տարիներուն մէջ: Այդ պղծիկ կղզին իտալական կառավարութիւնը նուիրած էր Իտալիան միացնող հերոսին, որ երկիցս հրաժարած էր ընդունել իր փրկած երկու Սիցիլիաներու թագաւորութեան թագը: Կարիպալտի իր մահուանէն 2—3 տարի առաջ Գաբէրա կղզին քաջուած աղքատ կեանք մը կանցնէր: Անոր կօգնէր նիւթական առաւելութեամբ չը փայլող իր մէկ բարեկամը. որ Հոռով մէջ անգամ մը յայտնած ըլլալով թէ Կարիպալտի կարօտութեան մէջ է, քանի մը օրուան մէջ 500,000 ֆրանգէ աւելի գումար մը հաւաքուեցաւ: Բայց մեծ հայրենասէրը այդ գումարէն միայն քանի մը հարիւր ֆրանգ առաւ եւ մնացածը յատկացուց Հոռով լիճերը ցամաքեցնելու:

Կարիպալտի արձանը կանգնեցնելու մտադրութեան դէմ, իտալական մամուլը կըսէ թէ՝ համեստ եւ անշահասէր հերոսին սկզբունքներուն եւ ոգւոյն հակառակ է եւ զանի վիրաւորել է իր արձանը կանգնեցնել: Ումանք կառավարիկն անոր բնակած տանը դիմաց վէմի մը վրայ ոսկեգօծ տառերով փորագրել՝ «Երախտագէտ Իտալիան իր մեծ զաւակ ձուգէքէ Կարիպալտիին: 1902 թ.»:

Յ. Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

Յանձնակատար

Պատիւ ունիմ պատ. ազգայնոց յայտարարելու թէ՝ Վառնայի, Շումլայի եւ Ռուսլուքի մէջ յանձնակատարութեան երթեւեկութեան սկսած եմ, անպայման վստահութիւն, ապրանքներու գինները խիստ դիւրամատ չելի եւ յանձնարարութիւնները պիտի կատարուին արագ եւ շատ ճշգրտութեամբ:

Հասցէ՝

Յ. Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

Վառնա

Իսկ Ռուսլուք մեր կեդրոնատեղին է Գալֆաեան եղբարց խանութը:

Երբ Լալեզարը հեռացնելու պէտքը զգացուեցաւ, Վանականը՝ փոխանակ արտասահման փոխադրելու, պատուելի Մարտիկին տունը տարաւ:

Պատուելի Մարտիկ ամենայն սիրով ընդունեց: Եւ որովհետեւ պանդուխտ մըն էր ինքը, շատ դիւրութեամբ համոզեց իր բարեկամները թէ մանկամարդ աղջիկը մօտիկ ազգականուհին էր:

Բայց Մերո անպար չկար: Ո՛ւր էր անիկա, Պատմե՛նք: Այդ ծերունին իր դերն ունէր, իր ծանր պարտականութիւններու մէջ կը գտնուէր... մէկ խօսքով՝ Մերո անպար Վանականին հոգին էր, անոր հաւատարիմ մարդն էր, անոր կեանքն էր: Հետեւաբար աղջիկէն ստիպուած էր բաժնուիլ, որպէս զի կասկածի մը տեղի չտար:

Մօտաւորապէս չորս ամիսներ սահմանէն, Լալեզար շատ քիչ անգամ իր հայրը կամ Վանականը կը տեսնէր, այն ալ լեռներու մէջ՝ ուր կերթար պատուելի Մարտիկին առաջնորդութեամբ:

Օր մը, երբ Լալեզար գիւղին նո-

րահաս աղջիկներու հետ շրջադաշտու գացած էր մօտիկ լեռներու մէջ, նշմարեց Գուրտ մը՝ որ ապառաժի մը տակ կեցած զինքը կը դիտէր:

Լալեզար ամբողջ մարմնովը դողաց, որովհետեւ ճանչցաւ այդ հրէշը, ճանչցաւ թէ Միրզա-Պէկի եղբոր որդին՝ Շարաֆ-Պէկն էր ան:

Անմիջապէս իր ընկերուհիներուն քով գնաց եւ առարկեց որ տկարութիւն մը կը զգար: Մանկամարդ աղջիկները քաղած բանջարեղէնները հաւաքեցին ու գիւղը վերադարձան:

Լալեզար չպատմեց պատահածը, որովհետեւ պատուելի Մարտիկ իր անցեալը չէր իմացեր:

Բոլոր գիշերը չկցաւ քնանալ. այնպէս որ կէս գիշերուան մօտ իր սենեակին քովը խլրտուք մը լսեց, ոտնաձայն մը լսեց... Փոքրիկ պատուհան մը ունէր, բացաւ զայն ու պարտէզը նայեցաւ: Ա՛հ, նշմարեց որ ցանկապատէն քիչ մը հեռուն մարդկային ստուեր մը կերեւար լուսնի աղօտ շողերուն տակ: Իսկոյն պատուհանը ամուր կերպով մը գոցեց: Ականջ դրաւ ժամերով ու սպասեց:

Մինչեւ առաւօտը՝ թէ՛ ինքը եւ թէ՛ ցանկապատին քով կեցած մարդկային ստուերը միեւնոյն դուրսեան մէջ մնացին:

Լուսուն դէմ այդ ուռուականը հոն չէր:

— Ո՛հ, չըլլայ թէ աչքիս երեւցաւ, մըմնջեց Լալեզար ինքնիրեն: Ի՛նչ խնդրութիւն կատարած իմ:

Սենեկէն դուրս ելաւ ու պատուելի Մարտիկին քով պիտի երթար, երբ տեսաւ այդ Գուրդը՝ որ դուռին առաջը կըսպասէր:

Լալեզար ներս քաշուեցաւ: Յետոյ բողբոլին յուզուած ու գունատ կերպարանքով մը պատուելի Մարտիկին սենեակը մտաւ եւ յայտնեց անոր թէ՛ դուռին առաջը մէկը կար: Ուսուցիչը շուտով մը գնաց՝ տեսնելու համար թէ ո՛վ էր: Երբ դուռը բացաւ եւ անձանօթին երեսը նայեցաւ, Գուրտը յայտնեց որ քիչ մը խօսիլ կուզէր իրեն հետ:

— Հրամայե՛ք, ըսաւ պատուելի Մարտիկ:

Երեսուն անցած, թիկնեղ, բարձր հասակով, լեռնցիի մը կերպարանքով

ու վայելչագեղ Գուրտը ներս մտաւ:

Պատուելի Մարտիկ սպասեց որ Գուրտը խօսի:

— Գուրտերէն լեզուն կը հասկնա՞ք հարցուց Գուրտը՝ խառն թուրքերէնով մը:

— Ո՛չ, չեմ հասկնար, պատասխանեց պատուելի Մարտիկ:

— Ի՞նչպէս կըլլայ այդ... սովորաբար այս կողմի գեղացիներն ամենքն ալ գիտեն եւ շատ աղէկ կը խօսին: Միթէ՞ դուք այս գեղին մէջ չէք ծնած:

— Չէ՛:

— Վանցի՞ք էք (ակնարկելով քաղաքացիները):

— Ո՛չ:

— Ըսելէ թէ այս կողմերէն չէք:

— Այո՛:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻԻՐՔԻՈՒ

Սթանպոլիտան էփրոս կազմ-
թալարնա պիտիտիտիկինէ պի
նաէն, առքերէրտէ վէ թըպիյէ
մէքէպի շակիրտանընտա խօշ-
նուտըզըզ հիւքմ իթմէքտէ օլ-
տըզը սէպէպէ Սէրայտա պէօյիւք
էնտիշէ հասըլ օլմուշ տըր :

— Եւէմէնտէ իթմիլայ կիթտիք-
ճէ արթըլօր : Սանտա շէհրին ա-
սըլարտան զապիթ օլընտըզը կիպի
վալինին վէ հիւքիւմէթին գաշ'ըշ
օլտըզլարը թաստիգ օլընըլօր :
Օրտունըն տախի Սրապարտան
միւթէշէթիլ պուլընան պիր գրս-
մընըն կէրի չէթիլմէսինտէն վէ
պիւթիւն Սրապիստանըն ըս-
եանա գալըզլմասընտան գօրգուլ-
մագտա տըր :

Պու սէպէպէրլէ Երտըզ Գէօշ-
կիւնտէ ֆէվզէլտէ թէրէտտիւտ
հիւքմ իթմէքտէ տիր : Ալթմըշ
թապուրտան զիյառէ Եւէմէն իշիւն
եօլա չըգարըլմըշ օլտըզընտան
մատա, թէքրար 40 թապուր
կէօնտիթիլմէք տիր :

— Խաղինէնին եօգըրըզը թա-
րիֆի նագապիլ տէրէճէտէ տիր :
Պանգ Օրօման Բարիզ վէ Լօտրա
տաիրէլէրինտէն ալտըզը իթմար
իւզըն, մէմուրլարա պիրէր ալլըգ
էօտէյէպիլմէք իշիւն հիւքիւմէթին
իթմէմիշ օլտըզը էօտիւնճ ագճէի
ասլա վէրէմէյէճէկինի գաթիլէն
պիւթիլմիշ տիր :

— Սատրապամ Գիւշիւք Սայիտ
բաշանըն եագընտա իթմիֆա ի-
տէճէկի ճիտտի սուրէթտէ Սթան-
պոլտա ըվալէթ օլընմագտա տըր :
Պազըլարը Սատրապամըն իս-
թիֆաընա սէպէպ' Տիւլունը Ու-
մուլիլէնին պիրլէշմէսի իշիւն Մ-
րուկիլէնին թէրթիպ իթմիկի ճէտ-
վէլի Սէրայտան միւշթիւլթ չը-
գարըլմասըն կէօնթէրիօրլար :

Տիւլէրլէրի Սատրապամըն իսթի-
ֆաըն աթիտէքի սէպէպտէն նաշի
օլաճաղըն զանն իտէյօրլար. եանի,
մէմուրլարա պիրէր ալլըգ մաշ
էօտէյէպիլմէք իշիւն' ալթիլէն կիւն
հալ իլէ Սայիտ բաշա մըգտարը
քեաֆի ագճէ անճագ թէրաքըիւմ
իթմիթիպիլմիշ իքէն, Սուլթանըն
էմրի իւզէրինէ, մէշթիւր մէպլազ
չահզատէկիւնըն տիլէթի թալ-
սիսաթընա հասը օլընմըշ :

— Յրաւիգֆօրքեր Յայրուհիկըն
Սէլանիք մուխպիրինին պէլանընա
կէօրէ, Մանասթըր վիլայէթի
մուհիֆըզ զապիթիլէրի շու հօլտա
իթաթթըզըզտա պուլընմըշլար :
Ալթէր թէլէիլարթտա պուլընան
մաաշլարընըն էօտէնիլմէսին թէ-
լէկրաֆիլէ թալէպ իթմիլէր, վէ
ասքէր գօմանտանը Յէրիտ բաշա-
նըն քէնտի ալէյիլէրինէ Սթան-
պոլա իսպարաթտա պուլընմասը
իշիւն, թէլէկրաֆի տաիրէսինի
զապիլարը ալթընա ալմըշլար :

— Թիւրքիւ վէ Պուլկարիա պէյ-

նինտէ մուսմէլաթը թիւճարիէ ի-
շիւն Պապը Ալի կէօմրիւկ նէզա-
րէթինէ պիր թազըմ հէնի թալի-
մաթ վէրմիշ օլտըզը կիպի, պու-
տան սօնրա պուլկար վէ թիւրք
կէօմրիւկ իտարէլէրի' իխրաճ օլր
նան մալլէր իշիւն' Ֆրանսըզ վէ
թիւրք իսանը իլէ շահատէթնա-
մէլէր վէրիլմէքէթի տիր : Իշպու-
չահատէթնամէլէր գալտիլէ վէ
բուլ մէսարթիֆինտէն իսալի օլա-
ճազլար :

— Բուս էլիսի Սթիւպտէքի
գօնսօլոսա պա թէլէկրաֆի թալի-
մաթ վէրուպ, Ֆիրմիլանըն թագ-
տիսինէ գարըն իթմիլարտա պու-
լընմալարը իշիւն պուլկար էհալիէ
իթմար իթմէսինի թէնպիս էլլէ-
միշ. վէ Պուլկարլարը թէհտիտի-
շիւն' մուլալիլ հարէքէթտէ պու-
լընանլարըն թիւրք հիւքիւմէթին
տէն թէլէտիպ օլընմագալարըն վէ
Բուսիանըն' ալլէրի վիպայէ իթ-
մէյէճէկինի պիւթիլմիշ տիր :

— Խաղինէնին Օսմանը պան-
գասընտան 150,000 իրա չէքմէք
իշիւն եէնիտէն միւշթէրէտէ պու-
լընտըզըն թալմըն մուխպիրի սօն
տէֆա պիւթիլմիշ տիր :

— Ճուսա կիւնիւ Բուս էլիսի
Մ. Չիւնօլիէվ Սուլթանըն հու-
զուրընա գապուլ օլընուպ, Ֆիր-
միլանըն թագտիսի իշիւն չըգան
իլառտէնին պազը մատտէլէրինի
խաֆիֆէթմէքտէն պահս օլընտը-
զը սէօլլէիլիօր :

— Կէշէն սալը կիւնիւ Պուլկա-
րիա սիւնօլընա եագըն Բատօլիլտէ
պիր պուլկար չէթէսի վէ թիւրք
ասքէրլէրի պէյինտէ գապիւ վու-
գու պուլուպ, Պուլկարլարտան ծի
էօլմիւշ վէ 7սի հարէլէնմիշ տիր :

ՏԱԽԻԼԻԾԷ

Խաթիգրազ մէսէլէսի շիմտիլիք
թէլէիլի օլընուպ, Սօպրանիլէնին
միւշթէրէսինէ իհալէ օլընմալա-
ճագ տըր :

— Ֆէլսամէթու Բրէնա Ֆէր-
տինանտ հազրէթլէրինին եագըն-
տա Բէթրապուրկա աղիմէթ իտէ-
ճէքլէրի միւրէվիլ տիր :

— Շէհրիմիլին Մուսալլա նամ
ճիվարտա քիտին Ապտուլրահման
թապիլ օլընան պէօյիւք ճամի'
ճուսա էրթէսի կիւնիւ իլթիտի
նամաղընտան սօնրա' հէր նա-
սըլա' իշէրտէն թուլթուլուպ,
սաաթ 6 րատտէլէրինտէ պիւթիլն
պիւսա ալէֆիլէր իշէրիսինտէ պու-
լընտըզը հալտէ, անճագ թուլու-
պաճըլար եէթիլէպիլտիլէր : Պու-
լարըն պիւթիլն զալլէթի եալը-
նըզ էթրաֆտաքի պիւնալարը գուր-
թարմալա հասը օլընտը. զիրա
ճամինին հէր թարաֆը աթէշսար-
մըշ օլմաղլէ, հարիգի սէօնտիւր-
մէկէ մէյտան գալմամըշ ըտը :

Մէշթիւր ճամինին հէր նէ գա-
տար Բէք չօգ վազըֆլարը վէ իրատը
վար իսէտէ' եէնիտէն ինչա օլընա-
մալաճագ տըր, զիրա շէհրին էն միւ-
թէպէր ճատտէսի իւզէրինտէ պու-

լընարագ' Սօֆիատան մուստտագ
բլան մուհիպինճէ երզըլմասը լա-
զըմ կէլիլի իտի :

ՊՕԷՐԼԷՐ

Լօնտրատան մալիս 24 թալիլի
պիր թէլէկրաֆի Տէյլի Նիւսին վէր-
միշ օլտըզը աթիտէքի մուհիմ հա-
վատիսի պիլտիլմիշ տիր :

«Վէրէնիթիլն գաապուսընտա
թէլէլմիւլ օլընան պօէր զապիլթ-
լէր վէ մէպուլար օուլհ իշիւն
թաշթը գարաա ալտըզլարը շու-
չարթլարը Լօրտ Բիշնէրէ թէքիֆ
իթմիլէր տիր :

1. Ինկիլթէրանըն հիմալէսի
ալթընտա պիւլա թէլէիլի Պօէրլէ-
րէ օթօնօմի ուսուլի իլէ պիր ի-
տարէ վէրիլմէսի :

2. Իւմիտ Պուրնու թապիլ օ-
լընան Գաբ միւլթէմէքաթընտա
Պօէրլէր իլէ պիրլէշէն ինկիլիգ
թապաալարընա աֆիլ ումուլի :

3. Պօէրլէրին սիլահ թաշըմալա
սէրպէստիլթի վէ հազըզ օլմասը :

4. Պէյազլարա վէրիլէն սէր-
պէստիլթին տըն եէրլի սիլահ
գապիլէլէրէ վէրիլմէլէճէկինէ տա-
լիր քէնտիլէրինին Թէլմին իտիլ-
մէսի :

5. Խաապ օլուրն չիֆթիլիք-
լէրին թէքրար ինչա վէ թէրթիպի
իշիւն լազըմ օլան ագճէնին վէրիլ-
մէսի :

Իշպուլ շարթլարըն ինկիլթէրա
տան գապուլ օլընտըզըն մէզ
քիւր կազէթա պիլտիլուպ, եալր-
նըզ օթօնօմի իտարէսինին նէ սա-
աթտան պաշլապիլէճէկի թալին
իտիլմէմիշ տիրօր : Քէշա Պօէրլէր
քէնտիլէրինի եէրիլէշտէն մուհա-
ֆապ իտէպիլմէք իշիւն սիլահ
թաշըմալա սէրպէստ օլաճազլար :

Մուլթաաթ թէլէկրաֆիսմէ-
տէն ալընան շու հապտիսին
թաֆսիլաթը հէր հալտէ պու կիւն
եարըն զահիլէ չըգաճագ տըր :

ՄԱՐԹԻՆԻՔ ՖԷԼԱԲԷԹԻ

Մարթինիք տաաընտա Սէն Բի-
էր շէհրինի վէ պազը քէօլլէրի
խաապ վէ 30-40 պին քիշիլ թէ-
լէֆ իթմիշ օլան Բըլէ եանար
տաղ էլան թէսքին օլընմալուպ,
աթէշ վէ թաշ բարշալարը աթ-
մագտա օլտըզը կիպի, մալիս 20
տէ թէքրար պիւթիլն աաա իւզհ-
րինէ քիւլ թօզլարը եալմըշ օլ-
մագտան մատա, Ֆօր տը Ֆրանս
շէհրինէ գատար 3 տէն 12 լիվրա-
լըզ թաշլար աթմըշ տըր : Պիւ-
թիւն աաանըն սէքէնէսի խէֆ ու
տէհշէթտէ գալուպ, հիւքիւմէթէ
վէ գօնսօլոսլարա գօշարագ «Աման
եէմէք վէ կիլմէք իսթէմէլիզ,
պիպի շու աաաաան գուրթուրըն»
տէյուպ ֆիլլան ու ֆիլլահտա
պուլընմըշլար տըր. պիշարէ գա-
տընլար վէ գըզլար սահիլլէլէ գօ-
շուպ, գարըլարընա չըգան էր-
քէկլէրին տիլլէրինէ գաբանարագ,
պիր տագիգէ էվլէլ քէնտիլէրինի
վարօրլարա նազլ իթմէլէրի իշիւն

եալվարըլար, Պազը քիմսէլէր տա-
լի գալըզլարըն եէթիլմէսինէ
պէքլէմէյուպ, քէնտիլէրինի տէ-
նիզէ աթարագ, հիւզլէլէ վա-
բօրլարա գատար կիթմիլէր տիր :
Նիւ Եօրք Հէրալ օրն մալիս 22
թարիլլէ ալտըզը մալիլմաթ իւզ-
լէ, սօն տէֆա տալի պիր չօգ
թէլէֆիլաթ վուգու պուլմուշ տըր :
Բարիգտէն վէրիլէն թալիլմաթ
Մարթինիք տաաընտաքի պիւ-
թիւն էհալինին նազլ իտիլմէսինի
թապիլիլէ իտէյօր :

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

«Վէսէլլօ» Հայ դերասանական խումբը
ամառնային առաջին ներկայացումը
պիտի տալ յառաջիկայ ուրբաթ երե-
կոյ ժամը 9 1/2 ին :

ՄՈՒՐԱՑԻԿ ԿԻՆԸ տրամ-գօմէտի 4
արար :

ՊԱՐ ԵՒ ԵՐԳ. Պ. Գ. Յակոբեանի եւ
Օր. Բօզալիլ կողմէ :

ՊԱԼԷՐ Օր. Բարասըյի կողմէ :

Խիտ Ժիճաղաշարժ գաւեշտ մը :

«Վէսէլլօ» Հայ դերասանական խումբը
նորանոր թատերախաղեր եւ տրամ-
գօմէտներ պատրաստած կուգայ այս
ամառնային եղանակը Վառնայի մէջ
անցնել եւ լիայոյս է թէ թատերասէր
հասարակութիւնը զինք պիտի քաջա-
լերէ :

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ Կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ. Այս երգարանը Բ. անգամ
տպագրուելով աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ գնոյն
աժանութեանը կը պարունակէ ազ-
գային հին եւ նոր խիտ շատ եր-
գեր : Գին 1 Ֆր.

ՆԵՏԱ Կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՆԸ,
Պուլկարիոյ ազատութենէն առաջ
Պուլկար գիւղացիին թուրքերէ կը-
րած տառապանքները ու անոնց նիստ
ու կացը կը պատկերացնէ : Շատ հե-
տաքերական : Գին 50 ՍԱԼԹ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉՈՂՆԵՐ. Պատկեր մը
Ճահահայաստանի իրական կեանքէն,
զրեց Ղ. Նահապետեան : Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար
պէտք է զիմիլ իրաւունքի խմբագրու-
թեան, բօսթի ծախքը 10 ալան
սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, եթէ ուրիշ
զիւրութիւններ պակսին, կընդունուի
նամակագրօշմ 10 0/0 զեղչով :



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնիլ կօ-
շիկներ որոնք իրենց վրայ
միացունեն ձեւի եւ գիւսաց-
կունութեան կատարելու-
թիւն եւ մանաւանդ զինի
չափաւորութիւն, առանց վարանելու
գիւղեք Ս. Սօքթ. Պատանովիչի տանը
գիւսաց :

Одговорникъ Н. Драгулевъ
Печ на Хр. Н. Войниковъ—Варна